ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 փետրվարի 2017 թվականի N 28-Ա

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արովյանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2017 թվականի փետրվարի 8-ի N 3 արձանագրությունը *(որոշումը)* **կարգադրում եմ.**

1. ***Սվետլանա Վարդգեսի Հովհաննիսյանին*** 2017 թվականի փետրվարի 17-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արովյանի N 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի <<*Ս. Հովհաննիսյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին*>> N 214-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի փետրվարի 17
ք. Հրազդան